ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Հ Ր Ա Մ Ա Ն

«19» դեկտեմբերի 2025 թ. N 22-Ա

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԵՎ ՆԵՐԴԻՐՆԵՐԻ ԿԱՍԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ և 9-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտե ներկայացված «ՆՈՐ ԲԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի և «OUS ՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման լիցենզիայի «Ջերմագազամատակարարում և օդափոխություն» ենթատեսակի ներդիրի պատասխանատու մասնագետի դիմումները

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Կասեցնել «OUS ՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության քաղաքաշինության բնագավառի շինարարության իրականացման 3-րդ դասի լիցենզիային կից «Ջերմագազամատակարարում և օդափոխություն» (ՔՊՆ-001952-06) ներդիրի գործողությունը: Կասեցման ժամկետ սահմանել մինչև խախտման պատճառի վերացումը:

2. Կասեցնել «ՆՈՐ ԲԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության քաղաքաշինության բնագավառի շինարարության իրականացման (ՔՊԼ-000107) 3-րդ դասի լիցենզիայի և լիցենզիային կից «Հիդրոտեխնիկական կառուցվածքներ» (ՔՊՆ-000107-07) ու

«Ջրամատակարարում և ջրահեռացում» (ՔՊՆ-000107-08) ենթատեսակի ներդիրների գործողությունը:

3. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի լիցենզավորման վարչության պետ Նշան Մարտիրոսյանին՝ ՀՀ լիցենզիաների միասնական էլեկտրոնային գրանցամատյանում կատարել համապատասխան փոփոխություն:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում այն ընդունելու մասին հրամանում նշված իրավաբանական անձանց իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

19.02.2025

X

ԵՂԻԱԶԱՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Signed by: VARDANYAN YEGHIAZAR 2614790133

Ե. ՎԱՐԴԱՆՅԱՆ